ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ 1998 Թ. ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 309.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՀԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՆՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 35-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ, 4 ԵՎ 5-ՐԴ ՄԱՍԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ 366-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻՆ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՄԱՍԱՄԲ՝ ՆՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 35-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ, 4 ԵՎ 5-ՐԴ ՄԱՍԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ 366-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻՆ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ, ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «ՀՀ Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ 1998 թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-ին հոդվածի 3-րդ մասի և վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին, 4 և 5-րդ մասերի, ինչպես նաև 366-րդ հոդվածի 2-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին, 4 և 5-րդ մասերի, ինչպես նաև 366-րդ հոդվածի 2-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության մասով, կարճելու մասին առաջարկությունը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՀՀ Վճռաբեկ դատարանի (այսուհետ նաև՝ Դիմող) դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2024 թվականի հունվարի 22-ին, որով Դիմողը խնդրել է.

«(…) որոշելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասերի, և 366-րդ հոդվածի 2-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ հոդվածին համապատասխանության հարցը՝ հաշվի առնելով, որ առկա օրենսդրական բացը ստեղծում է տուժողի դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքների, այդ թվում՝ սոցիալական արդարության վերականգնման և հատուցում ստանալու իրավունքի իրացման անհաղթահարելի խոչընդոտ, ինչպես նաև հանգեցնում հիմնական իրավունքները կարգավորելիս օրենքով դրանց իրականացման կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր նախատեսելու, Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան հաշվի առնելու սահմանադրական պահանջների խախտման:

(…)»:

2. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին՝ բացառությամբ 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենսգրքի 483-րդ հոդվածով նախատեսված դեպքերի: Օրենսգրքի 54-րդ, 54.1-ին, 54.2-րդ, 54.3-րդ, 54.4-րդ գլուխների դրույթներն ուժը կորցրած չեն ճանաչվել:

Օրենսգրքի՝ **«Քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ»** վերտառությամբ *35-րդ հոդվածի 1-ին մասով* ամրագրված է.

«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

1) բացակայում է հանցագործության դեպքը.

2) արարքի մեջ հանցակազմ չկա.

3) վնաս պատճառած արարքը քրեական օրենքով համարվում է իրավաչափ.

4) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը.

5) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ.

6) անցել են վաղեմության ժամկետները.

7) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ դատարանի այլ որոշում, որը հաստատում է քրեական հետապնդման անհնարինությունը.

8) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի չվերացված որոշում.

9) անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին.

10) անձը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար.

11) անձը կամովին հրաժարվել է հանցագործությունը մինչև վերջ հասցնելուց, եթե նրա փաստորեն կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում.

12) անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից.

13) ընդունվել է համաներման մասին օրենք»:

Օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-5-րդ մասերով ամրագրված է.

«4. Մեղադրողը, դատարանում հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, պարտավոր է հայտարարել ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին: Ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին մեղադրողի հայտարարությունը դատարանի համար քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք է:

5. Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:

Օրենսգրքի 35-րդ հոդվածի վիճարկվող դրույթները փոփոխվել են 2006 թվականի մայիսի 25-ի ՀՕ-91-Ն և 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՕ-415-Ն օրենքներով:

Օրենսգրքի՝ **«Արդարացման դատավճիռը»** վերտառությամբ *366-րդ հոդվածի 2-րդ մասով* սահմանված է.

«2. Դատարանը պարտավոր է սույն օրենսգրքի 35 հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով և երկրորդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում տվյալ դատական նիստում կայացնել արդարացման դատավճիռ»:

Օրենսգրքի 366-րդ հոդվածի 2-րդ մասում փոփոխություն/լրացում չի կատարվել:

3. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը, մասնավորապես, գտնում է, որ Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին, 4 և 5-րդ մասերի, 309.1-ին հոդվածի 3-րդ մասի և 366-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումների գործողության պայմաններում բացակայում է մեղադրողի կողմից արարքի իրավաբանական որակումը փոխելու հնարավորությունն այն պայմաններում, երբ չնայած նրան, որ հանցակազմ սահմանող քրեաիրավական նորմը, որով որակված է անձի արարքը, ճանաչվում է Սահմանադրությանը հակասող և անվավեր, այնուամենայնիվ, կատարված արարքը համապատասխանում

է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված մեկ այլ հանցակազմի հատկանիշ-ներին: Դիմողը նշում է, որ վերոնշյալ նորմերի համակցված վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջիններս հնարավորություն չեն տալիս համապատասխան ու անհրաժեշտ դատավարական գործիքակազմի գործադրմամբ փոփոխել մեղա-դրանքը, մասնավորապես այն դեպքում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի նորմը, որով նախատեսված և որով որակված է անձին մեղսագրվող արարքը, այլևս չի գործում, սակայն այդ արարքն առերևույթ համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի մեկ այլ նորմով նախատեսված ընդհանուր հանցակազմի հատկանիշներին:

Վերոնշյալի հիման վրա Դիմողը Սահմանադրական դատարանի ուշադրու-թյունն է հրավիրում վիճարկվող իրավակարգավորումների համատեքստում արար-քի իրավաբանական որակումը փոխելու հնարավորության բացակայությունը (իր գնահատմամբ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-ին հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման առարկայի շրջանակներում օրենսդրական բաց դիտարկելու անհրաժեշտության վրա, ինչի առկայությունն արձանագրելու պարա-գայում, ըստ Դիմողի, նշված նորմի հետ համակարգային կապի մեջ գտնվող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին, 4 և 5-րդ մասերի և 366-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները տվյալ գործի շրջանակներում ենթակա են լինելու անմիջական կիրառման, քանի որ գործի լուծումը հնարավոր է միայն վիճարկվող նորմերի կիրառման միջոցով:

Դիմողը նշում է. «(…) Սույն գործով Սահմանադրական դատարանի առջև բարձրացվող իրավական հարցը հետևյալն է. հատուկ հանցակազմ սահմանող քրեաիրավական նորմը, որով որակված է անձին մեղսագրվող արարքը, ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու պարագայում մեղադրողի կողմից արարքի իրավաբանական որակումը փոփոխելու և ՀՀ քրեական օրենս-գրքով նախատեսված մեկ այլ հանցակազմի հատկանիշներ պարունակող այդ արարքը վերաորակելու հնարավորության բացակայության և դատարանի կողմից քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելու պահանջի առկայության պայմաններում ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի կապակցությամբ առկա օրենսդրական բացը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 4-րդ, 5-րդ մասերի և 366-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը արդյո՞ք չեն ստեղծում մեղադրանքի պաշտպանության գործառույթի սահմանափակում, տուժողի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների խախտում, այդ թվում՝ սոցիալական արդարության վերականգնման և հատուցում ստանալու իրավունքի իրացման անհաղթահարելի խոչընդոտ, ինչպես նաև՝ հանգեցնում հիմնական իրավունքները կարգավորելիս օրենքով դրանց իրականացման կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր նախատեսելու, Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան հաշվի առնելու սահմանադրական պահանջների խախտման»:

4. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ նաև՝ Պատասխանող), մասնավորապես, վկայակոչելով Սահմանադրության 61, 63 և 176-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերաբերելի դրույթները, մեջբերելով Օրենսգրքի վիճարկվող դրույթներով սահմանված և այլ վերաբերելի իրավակարգավորումները, Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք ակտերում արտացոլված առանձին իրավական դիրքորոշումները, գտնում է, որ «Մեղադրանքի փաստական հանգամանքների փոփոխությունը հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309[1]-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով մեղադրանքը փոխելու որոշում կայացնելու համար, եթե այդ հանգամանքների փոփոխությունը առաջացնում է հանցակազմի հատկանիշների փոփոխություն:

(…)

Հարկ է նաև արձանագրել, որ դատարանի կողմից անձին մեղսագրվող արարքի քրեաիրավական որակման փոփոխությունը օրենսդրությամբ սահմանված երաշխիքների պահպանման պայմաններում բխում է Օրենսգրքով սահմանված՝ գործի արդարացի քննության սկզբունքի էությունից: Օրենսգրքով սահմանված իրավական երաշխիքների պայմաններում անձին մեղսագրվող արարքի իրավական որակման փոփոխությունն ամբողջությամբ անկանխատեսելի լինել չի կարող՝ մասնավորապես հիմնված լինելով անձին մեղսագրվող արարքի փաստական հանգամանքների վրա»:

Պատասխանողն արձանագրում է. «(…) տվյալ դեպքում օրենքի բացը հաղթահարելու անհնարինություն առկա չէ, մասնավորապես, այն պայմաններում, երբ օրենսդրի կողմից սահմանվել է հանցանքի քրեաիրավական որակման հնարավորություն, որի լայն մեկնաբանման պայմաններում հնարավոր է դառնում կիրառել նախկին խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համատեքստում: Բոլոր դեպքերում նշված նորմում սահմանված կարճման ինստիտուտը չի բացառում փաստական հանգամանքների բավարար լինելու դեպքում հանցանքի քրեաիրավական որակումը փոփոխել (մեղադրանքը փոխել)»:

5. Ուսումնասիրելով դիմումը, Դիմողի և Պատասխանողի գրավոր բացատրությունները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը մասամբ՝ 1998 թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին, 4 և 5-րդ մասերի, ինչպես նաև 366-րդ հոդվածի 2-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության մասով, ենթակա է կարճման՝ ներքոնշյալ հիմքով և պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին համապատասխան՝ *Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր:*

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում՝* ***եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան:***

Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասը, ամրագրելով դատարանների՝ Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը, կանխորոշել է այդ իրավասության իրացման շրջանակները: Այսպես՝ դատարանը նշված իրավասությունը կարող է իրացնել բացառապես

1) իր վարույթում գտնվող կոնկրետ գործով.

2) տվյալ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ **հիմնավոր կասկած** ունենալու պարագայում,

3) տվյալ գործի լուծումը **միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով** հնարավոր լինելու դեպքում:

Հիշատակված սահմանադրաիրավական բոլոր պայմանների համաժամանակյա առկայությունը դատարանների՝ Սահմանադրական դատարան դիմելու իրավասության իրացման պարտադիր նախապայմանն է:

Սույն գործով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դիմողը Սահմանադրական դատարանի առջև բարձրացնում է 1998 թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առկա ենթադրյալ բացի խնդիր՝ պատճառաբանելով, որ այն հանգեցնում է տուժողի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների խախտման, սահմանափակում է մեղադրանքի պաշտպանության գործառույթն այնքանով, որքանով Օրենսգրքում բացակայում են մեղադրողի կողմից արարքի իրավական որակումը փոփոխելու հնարավորությունն այն պայմաններում, երբ հատուկ հանցակազմ սահմանող քրեաիրավական նորմը, որով որակված է անձի արարքը, ճանաչվում է Սահմանադրությանը հակասող և անվավեր, սակայն այդ արարքն առերևույթ համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված մեկ այլ հանցակազմի հատկանիշներին:

Սահմանադրական դատարանն իր՝ 2022 թվականի մայիսի 6-ի ՍԴԱՈ-83 աշխատակարգային որոշմամբ փաստել է. «*(…) վիճարկվող նորմի սահմանադրականության վերաբերյալ դատավորի սուբյեկտիվ դիրքորոշումն արտահայտում է վերջինիս ներքին համոզմունքը, որը չի կարող հիմնվել սոսկ ենթադրությունների կամ չպատճառաբանված դատողությունների վրա, ուստի Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշումը պետք է բովանդակի վիճարկվող իրավադրույթի՝ Սահմանադրության համապատասխան հոդվածի համատեքստում ենթադրյալ հակասահմանադրականությունը հիմնավորող պատճառաբանությունների վերաբերյալ համապատասխան վերլուծություն, որը օբյեկտիվ հիմք է հանդիսացել դատավորի ներքին համոզմունքի ձևավորման համար»:*

Սահմանադրական դատարանի 2021 թվականի օգոստոսի 5-ի ՍԴԱՈ-175 աշխատակարգային որոշմամբ արձանագրված է. ««Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի նշված պահանջը դատարանները պետք է դիտարկեն Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված պայմանների (կոնկրետ սահմանադրական վերահսկողության) ենթատեքստում: Ըստ այդմ՝ դատարանները համապատասխան դիմումներում պետք է ներկայացնեն վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ իրենց հիմնավորումները, ինչպես նաև պետք է հիմնավորեն, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով»:

Սահմանադրական դատարանը վերահաստատում է, որ դատարանի դիմումների հիման վրա Սահմանադրական դատարանի կողմից կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում սահմանադրական արդարադատության իրականացման իմաստավորումը հանգում է **դատարանի կողմից ենթադրյալ հակասահմանադրական նորմի հիման վրա կոնկրետ վեճի լուծումը կանխելուն, որպիսի պայմաններում** *հիմնարար նշանակություն է ձեռք բերում արդարադատություն իրականացնելու բացառիկ իրավասությամբ օժտված սուբյեկտի կողմից ներկայացված դիմումի շրջանակներում, ի թիվս այլնի, վիճարկվող նորմի՝* ***Սահմանադրությանն անհամապատասխանությունը հիմնավորող այն***

բազմաբովանդակ պատճառաբանության *ներկայացումը,* որը կբացահայտի դատարանի՝ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով **«հիմնավոր կասկած»** ունենալու սահմանադրական պահանջը:

Անդրադառնալով Դիմողի կողմից բարձրացված հարցադրմանը՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ դիմումի շրջանակներում Դիմողի պատճառաբանությունների շղթան առավելապես վերաբերում է Օրենսգրքի 309.1-ին հոդվածի 3-րդ մասի ենթադրյալ հակասահմանադրականությանը, մինչդեռ Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին, 4 և 5-րդ մասերի, ինչպես նաև 366-րդ հոդվածի 2-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության հարցով Դիմողը համապատասխան հիմնավորումներ չի ներկայացրել: Դիմողի բարձրացրած խնդիրը, ըստ էության, Օրենսգրքի 309.1-ին հոդվածի 3-րդ մասի կարգավորման տիրույթում է:

Ողջ վերոգրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ Դիմողի՝ Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին, 4 և 5-րդ մասերի, ինչպես նաև 366-րդ հոդվածի 2-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ ներքին համոզման հիման վրա ձևավորված պատճառաբանությունների ու հիմնավորումների բացակայությունը հանգեցնում է Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով «հիմնավոր կասկածի» բացառմանը, ուստի՝ նշված մասով սույն դիմումով առկա է գործի քննությունը մերժելու՝ Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը, և սույն գործի վարույթը նշված մասով ենթակա է մասամբ կարճման՝ հաշվի առնելով Սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 71-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ Սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«ՀՀ Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ 1998 թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-ին հոդվածի 3-րդ մասի և վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին, 4 և 5-րդ մասերի, ինչպես նաև 366-րդ հոդվածի 2-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին, 4 և 5-րդ մասերի, ինչպես նաև 366-րդ հոդվածի 2-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության մասով, կարճել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

22 հուլիսի 2024 թվականի
ՍԴԱՈ-110